ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 954-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2006.07.26/40(495) Հոդ.881	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	26.05.2006
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	12.07.2006
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	14.07.2006
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27.01.2007	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
14 հուլիսի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2006 թվականի N 954-Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով մարդու կյանքի ու առողջության անվտանգության ապահովման և սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելման խնդիրները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

(նախաբանը փոփ. 30.07.15 N 867-Ն)

1. Հաստատել հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. ***(կետն ուժը կորցրել է 30.07.15 N 867-Ն)***

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 5 ամսվա ընթացքում օրենքով սահմանված կարգով հաստատել պարենային հումքում և սննդամթերքում ռադիոնուկլիդների որոշման մեթոդիկան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. հուլիսի 12
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2006 թվականի
մայիսի 26-ի N 954-Ն որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի հետևյալ ծածկագրերից հայկական կոնյակների և դրանց համար հումք հանդիսացող հայկական կոնյակի սպիրտների վրա՝

2208 20 120	խաղողի գինեյութերի թորումից ստացված կոնյակ՝ 2 լ կամ պակաս տարողությամբ տարաներում,
2208 20 620	խաղողի գինեյութերի թորումից ստացված կոնյակ՝ 2 լ-ից ավելի տարողությամբ տարաներում,
2208 20 400	խաղողի գինեյութերի թորումից ստացված սպիրտային թուրմ (չվերամշակված թորվածք)՝ 2 լ-ից ավելի տարողությամբ տարաներում,
2208 20 890	խաղողի գինեյութերի թորումից ստացված սպիրտային թուրմ 2 լ-ից ավելի տարողությամբ տարաներում:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են 1-ին կետում տրված հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց արտադրությանը, մակնշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև համապատասխանության գնահատման և սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելման նպատակով հայկական կոնյակի իսկության գնահատման ընթացակարգերը:
(2-րդ կետը փոփ. 25.09.14 N 1046-Ն)
3. Հայկական կոնյակները և հայկական կոնյակի սպիրտները ենթակա են համապատասխանության գնահատման:
(3-րդ կետը փոփ. 25.09.14 N 1046-Ն)

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են հետևյալ հասկացությունները՝
հայկական կոնյակ՝ յուրահատուկ բուրմունքով և համով էթիլ սպիրտի 40-ից մինչև 57 տոկոս ծավալային մասով ալկոհոլային խմիչք, որը պատրաստված է 3 տարվանից ոչ պակաս հասունացած հայկական կոնյակի սպիրտներից և շշալցված է Հայաստանի Հանրապետության տարածքում.
սովորական (օրդինար) հայկական կոնյակ՝ հայկական կոնյակ, որը պատրաստված է 3 տարվանից ոչ պակաս հասունացած և 4 կամ 5 միջին հասունացման տարիքի հայկական կոնյակի սպիրտներից.
տեսակավոր հայկական կոնյակ՝ հայկական կոնյակ, որը պատրաստված է կաղնեփայտե տակառներում կամ կաղնու տակառատախտակներով բեռնված պահեստատակառներում (բուտերում) 6 տարվանից ոչ պակաս հասունացած հայկական կոնյակի սպիրտներից:

Տեսակավոր հայկական կոնյակների պատրաստման համար օգտագործվող հայկական կոնյակի սպիրտների միջին տարիքը պետք է լինի ոչ պակաս տվյալ անվանման կոնյակի համար սահմանված տարիքից.

կոլեկցիոն հայկական կոնյակ՝ հայկական կոնյակ, որը պատրաստված է կաղնեփայտե տակառներում կամ պահեստատակառներում լրացուցիչ 3 տարվանից ոչ պակաս հնացված տեսակավոր կոնյակներից.

հայկական կոնյակի սպիրտ՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տարածքներում աճեցրած խաղողի հատուկ սորտերից ստացված գինենյութերից ֆրակցիոն թորման միջոցով պատրաստված և Հայաստանի Հանրապետության տարածքում հասունացած սպիրտ.

երիտասարդ հայկական կոնյակի սպիրտ՝ հայկական կոնյակի սպիրտ, որը շփման մեջ չի գտնվել կաղնու բնափայտի հետ.

հասունացած հայկական կոնյակի սպիրտ՝ հայկական կոնյակի սպիրտ, որը հասունացման ամբողջ ընթացքում շփման մեջ է գտնվել կաղնու բնափայտի հետ.

հայկական կոնյակի գինենյութ՝ հայկական կոնյակի սպիրտի ստացման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տարածքներում աճեցրած խաղողի հատուկ սորտերից պատրաստված գինենյութ՝ էթիլ սպիրտի նվազագույնը 8 տոկոս ծավալային մասով.

կուպաժավորում՝ գործողություն, որի ընթացքում խառնում են տարբեր քանակության, տարբեր վայրերից ստացված և տարբեր տեսակների ու հասունացման տարիքի հայկական կոնյակի սպիրտներ և տեխնոլոգիական հրահանգով նախատեսված այլ օժանդակ նյութեր՝ հայկական կոնյակի յուրահատուկ տեսակներ ստեղծելու նպատակով.

հայկական կոնյակի խմբաքանակ՝ հայկական կոնյակների ցանկացած քանակություն, որն արտադրված է նույն կազմակերպության կողմից, ունի նույն կուպաժը, շշալցման նույն թվականը և ձևակերպված է մեկ ապրանքաուղեկից փաստաթղթով.

հայկական կոնյակի (կոնյակի սպիրտի) նույնականացում՝ ընթացակարգ, որի միջոցով հավաստվում է շրջանառության բոլոր փուլերում հայկական կոնյակների (հայկական կոնյակի սպիրտների) նույնականությունը դրանց անվանմանը և էական հատկանիշներին:

III. ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Հայաստանի Հանրապետության տարածքում հայկական կոնյակների և կոնյակի սպիրտների իրացման ժամանակ պետք է պահպանվեն համապատասխանության գնահատման ենթակա արտադրանքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանները:

(5-րդ կետը փոփ. 25.09.14 N 1046-Ն)

6. Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ գտնվող հայկական կոնյակները և հայկական կոնյակի սպիրտները պետք է ուղեկցվեն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող հայտարարագրով կամ ունենան տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանի մակնշում:

(6-րդ կետը խմբ. 25.09.14 N 1046-Ն)

7. Սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելման նպատակով հայկական կոնյակներ արտադրող և սպառող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա հայկական կոնյակները լրացուցիչ կարող են ուղեկցվել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից տրված հայկական կոնյակների իսկության մասին վկայականով:

(7-րդ կետը փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

IV. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների պատրաստման համար օգտագործվող նյութերի անվտանգության պահանջները պետք է համապատասխանեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթներին:

9. Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների անվտանգությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1. Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների անվտանգության ցուցանիշները

Ցուցանիշը	Թույլատրելի մակարդակը, ոչ ավելի

Թունավոր տարրերը, մգ/կգ. կապար արսեն կադմիում սնդիկ	 0,3 0,2 0,03 0,005
Մեթիլ սպիրտը, գ/լ անջուր սպիրտում	 2.0
Ռադիոնուկլիդները, Բկ/լ. ցեզիում-137 ստրոնցիում-90	 70 100

(աղյուսակը փոփ. 12.07.12 N 830-Ն)
(9-րդ կետը փոփ. 12.07.12 N 830-Ն)

10. Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների քիմիական ցուցանիշները պետք է համապատասխանեն NN 2 և 3 աղյուսակներում տրված նորմերին:

Աղյուսակ N 2. Հայկական կոնյակների քիմիական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Նորմը
Էթիլ սպիրտի ծավալային մասը, %	40-57*
Բարձր սպիրտների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկված ըստ իզոամիլ սպիրտի, մգ/լ անջուր սպիրտում	1700-5000
Ալդեհիդների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկված ըստ քացախաթթվական ալդեհիդի, մգ/լ անջուր սպիրտում	50-500
Միջին էթերների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկված ըստ քացախաթթվական էթիլ եթերի, մգ/լ անջուր սպիրտում	500-2700
Ցնդող թթուների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկված ըստ քացախաթթվի, մգ/լ անջուր սպիրտում, ոչ ավելի	2000
Ցնդող միացությունների (ցնդող թթուներ՝ վերահաշվարկված ըստ քացախաթթվի, ալդեհիդներ՝ վերահաշվարկված ըստ քացախաթթվական ալդեհիդի՝ որպես քացախաթթվական ալդեհիդի և 1.1-դիէթոքսիէթանի (ացետալ) մեջ քացախաթթվական ալդեհիդի պարունակության գումար, բարձր սպիրտներ՝ պրոպանոլ-1-ը, բութանոլ-1-ը, բութանոլ-2-ը ու 2-մեթիլպրոպանոլ-1-ը՝ հաշվարկված որպես առանձին նյութեր, իսկ 2-մեթիլբութանոլ-1-ը ու 3-մեթիլբութանոլ-1-ը՝ հաշվարված որպես առանձին նյութեր կամ դրանց գումար և քացախաթթվական էթիլ եթեր) զանգվածային խտությունը, մգ/լ անջուր սպիրտում, ոչ պակաս	1250
Շաքարների զանգվածային խտությունը, գ/լ	
Երկաթի զանգվածային խտությունը, մգ/լ, ոչ ավելի	7-20*
Պղնձի զանգվածային խտությունը, մգ/լ, ոչ ավելի	1,5 5,0

* Կոնկրետ անվանման կոնյակների համար սահմանված նորմերից թույլատրելի շեղումները չպետք է գերազանցեն՝ էթիլ սպիրտի ծավալային մասի՝ ± 0,3%, շաքարների զանգվածային խտությունից՝ ± 2գ/լ

(աղյուսակը լրաց., փոփ. 12.07.12 N 830-Ն)

Աղյուսակ N 3. Հայկական կոնյակի սպիրտների քիմիական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Նորմը	
	երիտասարդ	հասունացած
Էթիլ սպիրտի ծավալային մասը, %	62,0-72,0	55 -72
Բարձր սպիրտների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկած ըստ իզոամիլ սպիրտի, մգ/լ անջուր սպիրտում	1800-6000	1700-5000
Ալդեհիդների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկած ըստ քացախաթթվական ալդեհիդի, մգ/լ անջուր սպիրտում	30-500	50-500
Միջին եթերների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկած ըստ քացախաթթվական էթիլ եթերի, մգ/լ անջուր սպիրտում	500-2500	500-2700
Ցնդող թթուների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկած ըստ քացախաթթվի, մգ/լ անջուր սպիրտում, ոչ ավելի	800	2000
Ցնդող միացությունների զանգվածային խտությունը, մգ/լ անջուր սպիրտում, ոչ պակաս	1250	1250
Ֆուրֆուրոլի զանգվածային խտությունը, մգ/լ անջուր սպիրտում, ոչ ավելի	30	30
Պղնձի զանգվածային խտությունը, մգ/լ, ոչ ավելի	8,0	8,0
Ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածային խտությունը, մգ/լ, ոչ ավելի	45	40
Երկաթի զանգվածային խտությունը, մգ/լ, ոչ ավելի	1,5	1,5

(աղյուսակը փոփ. 14.05.09 N 531-Ն, փոփ., լրաց. 12.07.12 N 830-Ն)

(10-րդ կետը փոփ. 14.05.09 N 531-Ն, փոփ., լրաց. 12.07.12 N 830-Ն)

11. Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների զգայորոշման ցուցանիշները պետք է համապատասխանեն NN 4 և 5 աղյուսակներում տրված բնութագրերին:

Աղյուսակ N 4. Հայկական կոնյակների զգայորոշման ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Բնութագիրը
Գույնը	բաց դարչնագույնից մինչև մուգ դարչնագույնը՝ ոսկեգույն երանգով
Թափանցիկությունը	թափանցիկ, փայլով, առանց նստվածքի և կողմնակի խառնուկների
Համը և փունջը	տվյալ անվանմամբ կոնյակին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի

Աղյուսակ N 5. Հայկական կոնյակի սպիրտների զգայորոշման ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Հայկական կոնյակի սպիրտի բնութագիրը	
	երիտասարդ	հասունացած
Գույնը	անգույնից մինչև բաց ծղոտագույն	ծղոտագույնից մինչև մուգ դարչնագույն
Թափանցիկությունը	թափանցիկ, առանց կողմնակի ներառուկների և նստվածքի	

Բուրմունքը	բարդ, արտահայտված գինու և թեթև ծաղկային տոներով	բարդ, կաղնու բաղադրամասերի թեթև, զգալի տոներից մինչև ավելի արտահայտված և նուրբ ծաղկավանիլինաշոկոլադային նրբերանգների տոներ
Համը	մաքուր, այրող, էթիլ սպիրտի թեթև համով	այրող, կաղնու, էթիլայինից մինչև լրիվ փափուկ, ներդաշնակ՝ բարկահամ դառնությամբ

12. Սույն տեխնիկական կանոնակարգի N 5 աղյուսակում տրված հայկական կոնյակի սպիրտների համի և բուրմունքի մեջ չի թույլատրվում կտրուկ եթերաալդեհիդային, քացախաթթվային, կծված, թանձրացած, վառած, նավթային, ծծմբաջրածնային և այլ կողմնակի տոներ:

13. Հայկական կոնյակի գինենյութերի զգայորոշման ցուցանիշները պետք է համապատասխանեն N 6 աղյուսակում տրված բնութագրերին:

Աղյուսակ N 6. Հայկական կոնյակի գինենյութերի զգայորոշման ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Բնութագիրը
Գույնը	բաց ծղոտագույնից մինչև վարդագույն
Արտաքին տեսքը	թափանցիկ կամ ոչ թափանցիկ հեղուկ, առանց մթերքին ոչ բնորոշ կողմնակի ներառուկների
Բուրմունքը և համը	մաքուր, գինենյութի, առանց կողմնակի հոտի և համի

Հայկական կոնյակի գինենյութերի քիմիական ցուցանիշները պետք է համապատասխանեն N 7 աղյուսակում տրված նորմերին:

Աղյուսակ N 7. Հայկական կոնյակի գինենյութերի քիմիական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Նորմը
Էթիլ սպիրտի ծավալային մասը, %, ոչ պակաս	8,0
Տիտրվող թթուների զանգվածային խտությունը, վերահաշվարկած ըստ գինեթթվի, գ/լ, ոչ պակաս	4,5
Ցնդող թթուների զանգվածային խտությունը, վերահաշվարկած ըստ քացախաթթվի, գ/լ, ոչ ավելի	1,2
Ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածային խտությունը, մգ/լ , ոչ ավելի	15

(աղյուսակը փոփ. 12.07.12 N 830-Ն)
(13-րդ կետը փոփ. 02.04.09 N 344-Ն, 12.07.12 N 830-Ն)

14. Հայկական կոնյակների պատրաստման համար օգտագործվող այլ նյութերը պետք է սահմանված լինեն արտադրողի կողմից հաստատված տեխնոլոգիական հրահանգներով և համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Փաթեթավորումը, պիտակավորումը, մակնշումը և պահումը

15. Իրացման համար նախատեսված հայկական կոնյակների սպառողական տարաները և դրանց խցանափակման արտադրատեսակները պետք է պատրաստված լինեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սննդամթերքի հետ շփման համար թույլատրված նյութերից:

(15-րդ կետը փոփ. 30.07.15 N 867-Ն)

16. Հայկական կոնյակի սպառողական տարայի, պիտակի կամ ցանկացած զուգորդությամբ պիտակի, կրկնապիտակի և մանյակապիտակի մականշվածքը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա) արտադրողի անվանումը և գտնվելու վայրը,

բ) «Հայկական կոնյակ» բառերը,

գ) հայկական կոնյակի անվանումը (եթե հայկական կոնյակի անվանման մեջ օգտագործվում են աստղեր, ապա դրանց թիվը պետք է համապատասխանի հայկական կոնյակի տարիքին),

դ) «Կոլեկցիոն» բառը՝ կոլեկցիոն կոնյակների համար,

ե) «Հայաստանի Հանրապետություն» բառերը,

զ) արտադրողի գրանցված ապրանքային նշանը (եթե պիտակը գրանցված չէ որպես ապրանքային նշան),

է) թնդությունը (էթիլ սպիրտի ծավալային մասը)՝ տոկոսներով,

ը) հայկական կոնյակի տարիքը, որը պետք է համապատասխանի կոնյակի սպիրտի միջին տարիքին,

թ) շշալցման թվականը,

ժ) լրացուցիչ հնացման տարիքը (կոլեկցիոն հայկական կոնյակների համար),

ժա) հայկական կոնյակի ծավալը՝ լիտրերով,

ժբ) կախված պայմանագրից՝ սպառողական տարայի վրա կարող են նշվել ստանդարտացման նորմատիվ փաստաթղթի նշագիրը, ըստ որի արտադրվել է հայկական կոնյակը և (կամ) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանը՝ համաձայն սույն տեխնիկական կանոնակարգի 40-րդ կետի:

Մականշվածքը պետք է կատարվի հայերենով կամ հայերենով և օտար լեզվով՝ ըստ պայմանագրի, իսկ արտահանման դեպքում՝ պայմանագրում նշված լեզուներով:

Տրանսպորտային տարայի մակնշումը պետք է իրականացվի սույն տեխնիկական կանոնակարգի XI բաժնում ներկայացված բեռների մակնշման ստանդարտի պահանջներին համապատասխան:

(16-րդ կետը փոփ. 25.09.14 N 1046-Ն)

17. Հայկական կոնյակի շշալցումը պետք է կատարվի՝ ըստ ծավալի կամ ըստ մակարդակի՝ 5 դմ^3-ից ոչ ավելի տարողությամբ տարաներում:

Տարբեր տարողությամբ սպառողական տարաների համար թույլատրելի թերալցումը (20 ± 0,5%)^{o}C ջերմաստիճանում չպետք է գերազանցի՝

0,75 լ-ից ավելի՝	6,0 մլ,
0,70 լ-ից մինչև 0,75 լ՝	5,0 մլ,
0,50 լ՝	4,0 մլ,
0,20 լ-ից մինչև 0,30 լ՝	3,0 մլ,
0,10 լ՝	1,5 մլ,
0,05 լ՝	1,0 մլ:

18. Հայկական կոնյակների սպառողական տարայի վրա թույլատրվում է զետեղել լրացուցիչ գովազդային բնույթի և արտադրանքը բնութագրող այլ տեղեկատվություն, որը չպետք է հակասի սույն տեխնիկական կանոնակարգի 16-րդ կետով սահմանված պահանջներին: Գովազդային բնույթի տեղեկատվությունը պետք է զետեղվի միայն արտադրողի մոտ դրա հավաստիությունը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում:

19. Հայկական կոնյակները պետք է պահվեն օդափոխվող, կողմնակի հոտերից զերծ սենքերում՝ 5°C-ից ոչ ցածր ջերմաստիճանի պայմաններում:

Հայկական կոնյակով շշերը պետք է պաշտպանված լինեն արևի ուղղակի ճառագայթների ազդեցությունից:

20. Հայկական կոնյակի սպիրտները պետք է լցվեն կաղնեփայտե տակառների, կամ տիտանային զոդովի տակառների, կամ այլ տարողությունների մեջ՝ պատրաստված սպիրտների հետ շփման համար թույլատրված նյութերից:

21. Փոխադրման համար նախատեսված հայկական կոնյակի սպիրտով տակառներում պետք է նախատեսվի տակառի ընդհանուր տարողության 2 տոկոսից ոչ պակաս չափով ազատ տարածություն:

22. Հայկական կոնյակի սպիրտների տակառների մականշվածքը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները և համապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգի XI բաժնում ներկայացված բեռների մակնշման ստանդարտի պահանջներին՝

ա) արտադրողի անվանումը և գտնվելու վայրը,

բ) «Հայկական կոնյակի սպիրտ» բառերը,

գ) արտադրանքի ծավալը կամ զտաքաշը և համաքաշը,

դ) տակառի և խմբաքանակի համարները,

ե) ապրանքային նշանը (առկայության դեպքում),

զ) էթիլ սպիրտի ծավալային մասը՝ տոկոսներով,

է) լցման ամսաթիվը,

ը) հայկական կոնյակի սպիրտի տարիքը,

թ) խմբաքանակի համարը,

ժ) կախված պայմանագրից՝ տարայի վրա կարող են նշվել ստանդարտացման նորմատիվ փաստաթղթի նշագիրը, ըստ որի արտադրվել է հայկական կոնյակի սպիրտը և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանը:

(22-րդ կետը փոփ. 25.09.14 N 1046-Ն)

23. Հայկական կոնյակի սպիրտները պետք է պահվեն 15-ից մինչև 25°C օդի ջերմաստիճանի և 75 տոկոսից մինչև 95 տոկոս օդի հարաբերական խոնավության պայմաններ ապահովող սենքերում:

VI. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

24. Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների նույնականացումը պետք է իրականացնեն դրանց արտադրման, վերամշակման, պահման, փոխադրման և իրացման փուլերում իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների համապատասխանության գնահատման և պետական վերահսկողության մարմինները:

(24-րդ կետը փոփ. 25.09.14 N 1046-Ն)

25. Նույնականացումն իրականացնում են՝

ա) գնահատման նշանակված մարմինները՝ համապատասխանության գնահատման ժամանակ,

բ) պետական վերահսկողության մարմինները՝ վերահսկողություն իրականացնելիս իրենց իրավասության սահմաններում,

գ) այլ մարմինները և կազմակերպությունները՝ նախաձեռնության կարգով արտադրանքի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության համապատասխանությունը հավաստելու անհրաժեշտության դեպքում:

(25-րդ կետը խմբ. 25.09.14 N 1046-Ն)

26. Կախված նույնականացման խնդիրներից՝ կիրառվում են նույնականացման հետևյալ եղանակները՝

ա) փաստաթղթային փորձաքննություն,

բ) արտադրանքի փորձարկում,

գ) արտադրանքի համտեսում (միայն հայկական կոնյակների համար):

27. Փաստաթղթային փորձաքննությամբ նույնականացումն իրականացնելու դեպքում պետք է ստուգվեն հայկական կոնյակների կամ հայկական կոնյակի սպիրտների սպառողական և փոխադրական տարաների կամ դրանց պիտակների վրա նշված մականշվածքի բովանդակության համապատասխանությունն ապրանքաուղեկից փաստաթղթերում տրված տեղեկատվությանը:

28. Հայկական կոնյակների փորձարկմամբ նույնականացումը պետք է կատարվի ըստ սույն տեխնիկական կանոնակարգի N 2 աղյուսակում տրված քիմիական ցուցանիշների:

29. Հայկական կոնյակի սպիրտների փորձարկմամբ նույնականացումը պետք է կատարվի ըստ սույն տեխնիկական կանոնակարգի NN 3 և 5 աղյուսակներում տրված քիմիական ցուցանիշների և զգայորոշման բնութագրերի:

30. Հայկական կոնյակի համտեսմամբ նույնականացումը պետք է կատարվի ըստ սույն տեխնիկական կանոնակարգի N 4 աղյուսակում տրված հայկական կոնյակի զգայորոշման ցուցանիշների՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված համտեսային հանձնաժողովի գործունեության կարգի համաձայն:

(30-րդ կետը փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

31. Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների նույնականացման արդյունքները պետք է ձևակերպվեն արձանագրությամբ, որը, կախված նույնականացման եղանակից, կարող է բովանդակի՝

ա) արտադրանքի անվանումը,

բ) արտադրողի մասին տեղեկատվությունը,

գ) շշալցման թվականը (հայկական կոնյակի համար),

դ) փաստաթղթերի փորձաքննության, արտադրանքի փորձարկման (համտեսման) արդյունքները,

ե) փաթեթավորման մասին տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողական տարայի տարողությունը՝ լիտրերով և փոխադրական տարայում շշերի քանակը (հայկական կոնյակի համար),

զ) տակառի համարը և տարողությունը՝ լիտրերով (հայկական կոնյակի սպիրտների համար),

է) ստանդարտացման նորմատիվ փաստաթղթի նշագիրը,

ը) խմբաքանակի համարը և չափը,

թ) նույնականացման արդյունքների հիման վրա կազմված եզրակացությունը:

VII. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒՄԸ

32. Հայկական կոնյակներ արտադրող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ հայտատու) հայկական կոնյակների իսկությունը հավաստելու համար տեսչական մարմին պետք է ներկայացնեն՝

ա) յուրաքանչյուր տարվա սկզբում նախորդ տարվա սեզոնային գինեգործության արդյունքների եզրափակիչ հաշվետվություն՝ համաձայն սույն տեխնիկական կանոնակարգի N 1 ձևի՝ նշելով վերամշակված խաղողի տրտերը և քանակը, որը պետք է համապատասխանի արտադրողի մոտ առկա խաղողի մթերման փաստաթղթերին,

բ) յուրաքանչյուր տարվա վերջում տեղեկանք՝ ըստ հասունացման տարիքի հայկական կոնյակի սպիրտների և պատրաստի հայկական կոնյակների (առանց շշալցման) մնացորդային քանակությունների (դեկալիտր անջուր սպիրտի) մասին,

գ) եռամյակը մեկ տեղեկանք՝ իրացված հայկական կոնյակների և ըստ հասունացման տարիքային խմբերի գնված

հայկական կոնյակի սպիրտների մասին,

դ) յուրաքանչյուր տարվա վերջում փաստաթուղթ՝ խաղողի մթերման և արտադրված գինենյութի քանակական արդյունքների մասին՝ նշելով մթերած խաղողի տարածքային ծագումը, ինչպես նաև հայկական կոնյակի գինենյութի պատրաստման համար օգտագործվող խաղողի կոնկրետ սորտը:

(32-րդ կետը փոփ. 25.09.14 N 1046-Ն, 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

33. Հայկական կոնյակի յուրաքանչյուր անվանատեսակի կուպաժավորման ավարտից հետո և շշալցումն սկսելուց 10 օր առաջ դրա մասին հայտատուն գրավոր տեղեկացնում է տեսչական մարմնին՝ կցելով կուպաժավորման թերթիկի պատճենը: Տեսչական մարմինն ուսումնասիրում է կուպաժավորման թերթիկում նշված կուպաժավորման համար օգտագործված հայկական կոնյակի սպիրտների միջին տարիքի ապահովման փաստը (կուպաժավորման համար կարող են օգտագործվել 3 տարվանից ոչ պակաս հասունացած հայկական կոնյակի սպիրտներ): Տեսչական մարմնի ներկայացուցիչը կուպաժավորման թերթիկով ներկայացված պատրաստի հայկական կոնյակի քանակից կատարում է նմուշառում՝ սույն տեխնիկական կանոնակարգի XI բաժնում նշված նմուշառման ստանդարտով սահմանված կարգին համապատասխան: Ընտրված նմուշների մի մասը ներկայացվում է համապատասխան հավատարմագրված փորձարկման լաբորատորիա՝ փորձարկման, մյուս մասը՝ համտեսային հանձնաժողով՝ համտեսում իրականացնելու և եզրակացություն ստանալու համար: Համտեսումը պետք է իրականացվի սույն տեխնիկական կանոնակարգի 30-րդ կետում նշված կարգին համապատասխան: Հայկական կոնյակի փորձարկումներն իրականացվում են հայտատուի հաշվին:

(33-րդ կետը փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

34. Հայկական կոնյակների իսկության մասին վկայական ստանալու նպատակով հայտատուն տեսչական մարմին է ներկայացնում հայտ (N 2 ձև):

Հայտին կից ներկայացվում է փաստաթղթերի հետևյալ լրակազմը՝

ա) հայկական կոնյակի խմբաքանակի հաշիվ-ապրանքագիրը կամ դրան փոխարինող փաստաթուղթը,

բ) ***(ենթակետը հանվել է 28.12.06 N 1909-Ն)***

Այն դեպքում, երբ հայկական կոնյակը շշալցված է կուպաժից, որի վերաբերյալ տեսչական մարմնում առկա չեն սույն տեխնիկական կանոնակարգի 32-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ապա տեսչական մարմնի ներկայացուցիչը հայկական կոնյակի նմուշն ընտրում է այդ կուպաժից՝ համտեսային հանձնաժողովից համտեսային եզրակացությունն ստանալու և սույն տեխնիկական կանոնակարգի 33-րդ կետին համապատասխան փորձարկման ներկայացնելու նպատակով:

(34-րդ կետը փոփ. 28.12.06 N 1909-Ն, 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

35. Հայտը տեսչական մարմնում գրանցվելուց հետո մեկօրյա ժամկետում պետք է իրականացվի ներկայացված փաստաթղթերի լրակազմի ստուգում: Լրակազմում որևէ փաստաթղթի բացակայության դեպքում փորձաքննություն չի կատարվում և ներկայացված փաստաթղթերը գրությամբ վերադարձվում են հայտատուին:

(35-րդ կետը փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

36. Փաստաթղթերի փորձաքննության դրական արդյունքից հետո շշալցված, ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված հայկական կոնյակից տեսչական մարմնի կողմից վերցվում են փորձանմուշներ, որոնք փորձարկման են տրվում հայկական կոնյակի արտադրությամբ և (կամ) իրացմամբ չզբաղվող հավատարմագրված փորձարկման լաբորատորիա: Փորձանմուշների ընտրությունը և դրանց փորձարկումներն իրականացվում են հայտատուի հաշվին:

Փորձարկման արձանագրությունը պետք է բովանդակի՝

ա) փորձարկումը կատարող լաբորատորիայի անվանումը, գտնվելու վայրը,

բ) փորձարկման լաբորատորիայի հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետը,

գ) արտահանվող հայկական կոնյակի անվանատեսակը և տարիքը,

դ) ֆիզիկաքիմիական ցուցանիշները,

ե) էթիլ սպիրտի ծավալային մասը՝ տոկոսներով (թնդությունը),

զ) կոնյակի ծավալը՝ վերահաշվարկած ըստ անջուր սպիրտի, լիտրերով,

է) շշի տարողությունը,

ը) անվտանգության ցուցանիշները,

թ) փորձարկման արձանագրությունը կազմելու ամսաթիվը:

Փորձարկման արձանագրությունը պետք է ստորագրվի հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի ղեկավարի կողմից և կնքվի:

(36-րդ կետը խմբ. 28.12.06 N 1909-Ն, փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

37. Սույն տեխնիկական կանոնակարգի 32-34-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի փորձաքննության, 36-րդ կետով նախատեսված հայկական կոնյակի յուրաքանչյուր անվանատեսակի փորձարկման արձանագրության մեջ ներկայացված ցուցանիշների և նույն անվանատեսակի հայկական կոնյակի կուպաժավորման ավարտից հետո վերցված փորձանմուշի փորձարկման արձանագրության մեջ նշված ցուցանիշների համապատասխանության և 32-րդ կետով նախատեսված մթերման փաստաթղթերի առկայության դեպքերում պետք է կազմվի հայկական կոնյակի իսկության վկայականի տրամադրման վերաբերյալ համապատասխանության եզրակացություն:

Դրական արդյունքների հիման վրա մեկօրյա ժամկետում հայտատուին տրամադրվում է հայկական կոնյակի իսկության մասին վկայականի (N 3 ձև) մեկ օրինակ՝ հայերենով: Անհրաժեշտության դեպքում վկայականը կարող է

ձևակերպվել նաև ռուսերենով կամ անգլերենով:

(37-րդ կետը խմբ. 28.12.06 N 1909-Ն)

38. Փաստաթղթերի փորձաքննության և հայկական կոնյակի փորձարկման բացասական արդյունքների դեպքում մեկօրյա ժամկետում հայտատուին պետք է տրվի հայտի մերժման մասին եզրակացություն՝ նշելով մերժման պատճառները, որը պետք է ստորագրված լինի տեսչական մարմնի ղեկավարի կողմից:

(38-րդ կետը փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

VIII. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

(վերնագիրը փոփ. 25.09.14 N 1046-Ն)

39. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների համապատասխանությունը գնահատելու համար արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված՝ համապատասխանության հայտարարագրման սխեմաներից որևէ մեկով հավաստված համապատասխանության հայտարարագիր:

(39-րդ կետը խմբ. 25.09.14 N 1046-Ն)

40. ***(կետն ուժը կորցրել է 25.09.14 N 1046-Ն)***

41. ***(կետն ուժը կորցրել է 25.09.14 N 1046-Ն)***

42. ***(կետն ուժը կորցրել է 25.09.14 N 1046-Ն)***

43. ***(կետն ուժը կորցրել է 25.09.14 N 1046-Ն)***

44. ***(կետն ուժը կորցրել է 25.09.14 N 1046-Ն)***

45. ***(կետն ուժը կորցրել է 25.09.14 N 1046-Ն)***

46. ***(կետն ուժը կորցրել է 25.09.14 N 1046-Ն)***

47. ***(կետն ուժը կորցրել է 25.09.14 N 1046-Ն)***

48. ***(կետն ուժը կորցրել է 25.09.14 N 1046-Ն)***

IX. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

49. Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

X. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

50. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով:

(50-րդ կետը փոփ. 25.09.14 N 1046-Ն)

XI. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ստանդարտի նշագիրը (բաժինը, կետը)	Պահանջներ և փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը
1	2
ՀՍ 179 (բաժին 4)	Գինեգործական արտադրանք. Ընդունման կանոններ և նմուշառման մեթոդներ
ԳՕՍՏ 12280	Գինիներ և գինենյութեր. Կոնյակներ և կոնյակի սպիրտներ. Ալդեհիդների որոշման մեթոդ
ԳՕՍՏ 3191	Գինիներ, գինենյութեր, կոնյակներ և կոնյակի սպիրտներ, պտղահատապտղային սպիրտացված հյութեր. Էթիլ սպիրտի որոշման մեթոդներ
ԳՕՍՏ 13192	Գինիներ, գինենյութեր և կոնյակներ. Շաքարների որոշման մեթոդ
ԳՕՍՏ 13193	Գինիներ, գինենյութեր, կոնյակներ և կոնյակի սպիրտներ, պտղահատապտղային սպիրտացված հյութեր. Ցնդող թթուների որոշման մեթոդներ
ԳՕՍՏ 13194	Կոնյակներ և կոնյակի սպիրտներ. Մեթիլ սպիրտի որոշման մեթոդ
ԳՕՍՏ 13195	Գինիներ, գինենյութեր, կոնյակներ և կոնյակի սպիրտներ, պտղահատապտղային սպիրտացված հյութեր. Երկաթի որոշման մեթոդ

ԳOUS 14138	Կոնյակի և պտղային սպիրտներ. Բարձր սպիրտների որոշման մեթոդ
ԳOUS 14139	Կոնյակի և պտղային սպիրտներ. Միջին եթերների որոշման մեթոդներ
ԳOUS 14192	Բեռների մակնշում
ԳOUS 14252	Գինիներ և գինենյութեր. Տիտրվող թթուների որոշման մեթոդներ
ԳOUS 14352	Կոնյակի սպիրտներ. Ֆուրֆուրոլի որոշման մեթոդ
ԳOUS 23943	Գինիներ և կոնյակներ. Շշալցման լրիվության որոշման մեթոդներ
ԳOUS 26927	Սննդահումք և սննդամթերք. Սնդիկի որոշման մեթոդ
ԳOUS 26928	Սննդամթերք. Երկաթի որոշման մեթոդ
ԳOUS 26930	Սննդահումք և սննդամթերք. Արսենի որոշման մեթոդ
ԳOUS 26931	Սննդահումք և սննդամթերք. Պղնձի որոշման մեթոդ
ԳOUS 26932	Սննդահումք և սննդամթերք. Կապարի որոշման մեթոդ
ԳOUS 26933	Սննդահումք և սննդամթերք. Կադմիումի որոշման մեթոդ
ԳOUS 30538	Սննդամթերք. Ատոմային էմիսիայի մեթոդով թունավոր տարրերի որոշման մեթոդիկա
ԳOUS Ռ 51655	Ալկոհոլային արտադրանք և դրա արտադրության համար հումք. Ազատ և ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածային խտության որոշման մեթոդ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Ձև N 1

Ե Զ Ր Ա Փ Ա Կ Ի Չ Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

..... Թ Վ Ա Կ Ա Ն Ի Ս Ե Զ Ո Ն Ա Յ Ի Ն Գ Ի Ն Ե Գ Ո Ր Ծ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ր Դ Յ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ի

Խաղողի սորտի անվանումը	Վերամշակված խաղողը, կգ	Ստացված քաղցուն		Գինենյութերի ելանքը				Մնացուկները					Գինենյութերի մշակման կորուստները, դեկալիտր
		դեկալիտր	շաքարայնությունը, %	տեսակի և մակնիշի անվանումները	դեկալիտր	կոնդիցիան		խմորիչ և դիրտ		այդ թվում՝ գինենյութերի, դեկալիտր	կնճեռ	չանչ	
						սպիրտը, %	շաքարը, %	սպիրտը, %	շաքարը, %		կգ	կգ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14

Ձև N 2

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի
անվտանգության տեսչական մարմնի ղեկավար
պրն _____

Հ Ա Յ Տ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատու_____
(կազմակերպության անվանումը)

Խնդրում եմ տրամադրել իսկության վկայական՝ ներկայացված հայկական կոնյակների համար:
Արտադրանքի բնութագիրը.

NN ը/կ	Կոնյակի անվանումը	Խմբաքանակը (շիշ), հատ	Հաշիվ-ապրանքագրի համարը	Շշի տարողությունը, լ	Կոնյակի տարիքը, տարի	Էթիլ սպիրտի ծավալային մասը, %	Հերթական կուպաժի համարը	Կոնյակի քանակը, վերահաշվարկած՝ ըստ անջուր սպիրտի, դեկալիտր	Շաքարների զանգվածային խտությունը, գ/դմ³	Ակցիզային դրոշմանիշերի համարները
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

Կից ներկայացված փաստաթղթերը՝

1._____

2. _____

3._____

4._____

_____ _____

(ստորագրությունը) (անվանատառը, ազգանունը)

Կ.Տ.

____ _____ 200 թ.

(ձևը լրաց. 28.12.06 N 1909-Ն, փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

Հավ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. _____
(արտադրող կազմակերպության անվանումը)
2. _____
(առաքող կազմակերպության անվանումը)

3. _____
(ստացողը)

4. Հայկական կոնյակների բնութագիրը.

NN ը/կ	Կոնյակի անվանումը	Ապրանքի խմբաքանակը, (շիշ) հատ	Հաշիվ-ապրանքագրի համարը	Շշի տարողությունը, լ	Կոնյակի տարիքը (տարի)	Էթիլ սպիրտի ծավալային մասը, %	Շաքարների զանգվածային խտությունը, գ/դմ³
1.							
	Ընդամենը						

5. Արտադրանքի իսկության մասին եզրակացություն.

Սույն վկայականով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը հավաստում է, որ 4-րդ կետում նշված հայկական կոնյակները բացառապես ստացվել են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տարածքներում աճեցրած խաղողի տրտերից պատրաստված հայկական կոնյակի գինեյութերի թորման արդյունքում ստացված և Հայաստանի Հանրապետության տարածքում հասունացած հայկական կոնյակի սպիրտներից և հաստատում է, որ այդ կոնյակների շշալցումը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքում:

(5-րդ կետը փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության
սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ղեկավար _____ _____

(ստորագրությունը) (անվանատառը, ազգանունը)

Կ.Տ.

____ _____ 200 թ.

(ձևը փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)

(հավելվածը փոփ., խմբ., լրաց. 28.12.06 N 1909-Ն, փոփ. 02.04.09 N 344-Ն, 14.05.09 N 531-Ն, փոփ., լրաց. 12.07.12 N 830-Ն, փոփ., խմբ. 25.09.14 N 1046-Ն, փոփ. 30.07.15 N 867-Ն, 14.01.21 N 47-Ն)